

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱԿԻՐ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ
(1919—1981)

Մայիսի 4-ին, երկուշաբթի օրը, անսպասելիորեն վախճանվել է Բուլղարիայի Ռուսե քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Խաչատուր խաչակիր քահանա Մովսիսյանը:

Հանգուցյալը, ավազանի անունով՝ Գեվորգ, ծնվել է 1919 թվականի նոյեմբերի 14-ին Վառնա քաղաքում: Նա իր նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային վարժարանում և վաղ հասակից մասնավոր սեր է ունեցել դեպի եկեղեցական ծառայությունը:

Նա երկար տարիներ, որպես դպիր և սարկավագ, ծառայել է Շումենի և Ռուսեի հայկական եկեղեցիներում:

1971 թվականին հանգուցյալը քահանա է ձեռնադրվել Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանից և երկար տարիներ, որպես այցելու հովիվ, բարեխղճորեն ծառայել է նաև թափուր մնացած Շումենի և Սիլիստրայի հայ եկեղեցիներում:

Մայիսի 5-ին Ռուսեի հայոց եկեղեցում կատարվել է հանգուցյալի վերջին օծման արարողությունն ու թաղման կարգը՝ ի ներկայության Սոֆիայի Տ. Մեսրոպ ավագ քահանա Պալյանի, Վառնայի Տ. Ղևոնդ ավագ քահանա Պոյաճյանի և հոծ հավատացյալների:

Արարողությանը ներկա է լինում նաև Ռուսե քաղաքի Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Տ. Անտոնի միտրոպոլիտը՝ յոթ քահանաներով:

Դամբանականներ են խոսում Տ. Անտոնի միտրոպոլիտը և Տ. Մեսրոպ ու Տ. Ղևոնդ քահանա հայրերը՝ վեր հանելով հանգուցյալի արժանիքը որպես ազնիվ և հավատացյալ հոգևորականի, հայ մարդու, բուլղար և հայ ժողովուրդների և Եկեղեցիների բարեկամության ջատագովի:

Նույն օրը, երեկոյան ժամը 15-ին, կատարվում է հանգուցյալի թաղման արարողությունը, տեղի հայոց գերեզմանոցում:

Հանգիստ Տ. Խաչատուր խաչակիր քահանա Մովսիսյանի ոսկորներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: